ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

2 օգոստոսի 2016 թվականի **թիվ 12** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք երկաթուղային եւ օդային տրանսպորտով ներմուծվող ապրանքների մասին նախնական տեղեկատվության կառուցվածքի եւ ձեւաչափերի կիրառման մասին

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում «Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության 11-րդ կետին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 3 հավելված)՝

Եվրասիական տնտեսական խորհրդի կոլեգիան Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին **հանձնարարում է** 2016 թվականի հոկտեմբերի 1-ից, սակայն 2015 թվականի հոկտեմբերի 8-ի ««Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ բնական մորթուց» ապրանքային դիրքում ներառված հսկիչ (նույնականացման)

նշաններով ապրանքների դրոշմավորման ներդրման փորձնական ծրագիրը 2015–2016 թվականներին իրականացնելու մասին» համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, կիրառել Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք երկաթուղային տրանսպորտով ներմուծվող ապրանքների մասին նախնական տեղեկատվության կառուցվածքն ու ձեւաչափը («Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք երկաթուղային տրանսպորտով ներմուծվող ապրանքների մասին նախնական տեղեկություններ տրամադրելիս էլեկտրոնային փոխգործակցության մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 27 հանձնարարականի հավելված) եւ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք օդային տրանսպորտով ներմուծվող ապրանքների մասին նախնական տեղեկատվության կառուցվածքն ու ձեւաչափը («Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք օդային տրանսպորտով ներմուծվող ապրանքների մասին նախնական տեղեկություններ տրամադրելիս էլեկտրոնային փոխգործակցության մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի ապրիլի 12-ի թիվ 5 հանձնարարականի հավելված)՝ հաշվի առնելով փոփոխությունները՝ հավելվածի համաձայն:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահի ժ/պ՝ Կ. Մինասյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի
օգոստոսի 2-ի թիվ 12 հանձնարարականի

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք երկաթուղային եւ օդային տրանսպորտով ներմուծվող ապրանքների մասին նախնական տեղեկատվության կառուցվածքում եւ ձեւաչափում կատարվող

1. Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք երկաթուղային տրանսպորտով ներմուծվող ապրանքների մասին նախնական տեղեկատվության կառուցվածքում եւ ձեւաչափում (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 27 հանձնարարականի հավելված)

ա) 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Փաստաթղթերի էլեկտրոնային ձեւերի ցանկը

Փաստաթղթի ծածկագիրը	Փաստաթղթի անվանումը	XML փաստաթուղթը	Անվանատարածքը
1006209E	Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք երկաթուղային տրանսպորտով ներմուծվող ապրանքների մասին նախնական տեղեկատվություն	PIRWInformationCU	urn:customs.ru:Information:CustomsDocuments:KD Tout _CU:5.0.11

բ) 3–րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3. Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք երկաթուղային տրանսպորտով ներմուծվող ապրանքների մասին նախնական տեղեկատվություն

Անվանատարածքը՝ urn:customs.ru:Information:CustomsDocuments:PIRWInformationCU:5.10.0

Անվանատարածքի նախածանցը՝ PIRWCU

Տարբերակը՝ 5.11.0.0

Ներմուծվող անվանատարածքները՝

cat_ru: urn:customs.ru:CommonAggregateTypes:5.0.10

clt_ru: urn:customs.ru:CommonLeafTypes:5.0.10

catESAD_cu: urn:customs.ru:CUESADCommonAggregateTypesCust:5.0.11

cltESAD_cu: urn:customs.ru:CUESADCommonLeafTypes:5.0.10

CategoryCust: urn:customs.ru:Categories:3.0.0

2. Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք օդային տրանսպորտով ներմուծվող ապրանքների մասին նախնական տեղեկատվության կառուցվածքում եւ ձեւաչափում (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի ապրիլի 12-ի թիվ 5 հանձնարարականի հավելված)

ա) 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Փաստաթղթերի էլեկտրոնային ձեւերի ցանկը

Փաստաթղթի ծածկագիրը	Փաստաթղթի անվանումը	XML փաստաթուղթը	Անվանատարածքը
3006801E	Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք օդային տրանսպորտով ներմուծվող ապրանքների մասին նախնական տեղեկատվություն	PIAirlnformationCU	urn:customs.ru:Information:CustomsDocuments:KDT out _CU:5.0.1

բ) 3–րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3. Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք օդային տրանսպորտով ներմուծվող ապրանքների մասին նախնական տեղեկատվություն

Անվանատարածքը՝ urn:customs.ru:Information:CustomsDocuments:PIRWInformationCU:5.10.0

Անվանատարածքի նախածանցը՝ pia

Տարբերակը՝ 5.11.0.0

Ներմուծվող անվանատարածքները՝

CategoryCust: urn:customs.ru:Categories:3.0.0

clt_ru: urn:customs.ru:CommonLeafTypes:5.0.10

cat_ru: urn:customs.ru:CommonAggregateTypes:5.0.10

cltESAD_cu: urn:customs.ru:CUESADCommonLeafTypes:5.0.10

catESAD_cu: urn:customs.ru:CUESADCommonAggregateTypesCust:5.0.11